ԳԼՈՒԽ ԺԷ
ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՎՐԱՑԻՆԵՐԻ ԴԵՄ

Երբ Մովրովը կոտորեց պարսիկներին և երկիրը ավերեց, իմացավ, որ շահը չի լռի այս լուրը լսելով: Իր կինն ու որդիները և կայքը ուղարկեց Կարին, իսկ ինքը հավաքելով բոլոր վրացիներին, պատվիրեց նրանց պատրաստ լինել, մինչև որ տեսնենք, թե ինչ է լինելու: Իսկ այն պարսիկները, որ Մովրովից փախան, գնացին շահին պատմեցին: Երբ շահը այս լուրը լսեց, փռնչում, մռնչում էր, գոռում-գոչում էր ինչպես ճագակորուստ առյուծ: Ապա հրամայեց մի իշխանի, որին կոչում էին Շոռչիբաշի, զորք հավաքել և ինքը լինել նրանց հրամանատարը և գնալ վրացիների վրա: Նա կատարեց շահի հրամանները և չվեց Վրաստանի կողմը:

Նույնպես էլ Մովրովը առավ վրաց զորքերը և հասավ պարսից զորքերի մոտ իբրև միմյանց ախոյաններ մի վայրում, որ կոչվում է Ալգեթ: Վրաց զորքերում գտնվում էր հաղթամարմին ու հաստաձգ մի մարդ, լայնաճակատ էր ու մեծագլուխ և պատերազմական գործի մեջ քաջ: Սրա անունն էր Աղաթանկին: Նա պատերազմում նախահարձակ եղավ և ասում էր, որ պարսից ամբողջ զորքը ինձ բաժին թող լինի (այսինքն՝ ես կոտորեմ), սակայն միայն շեկ վարազից երկյուղ ունեմ, այսինքն՝ Ամիրգունա խանից երկյուղում եմ:

Եվ նույն Ալգեթ վայրում սաստիկ ընդհարվեցին միմյանց այնպիսի ուժեղ բախումով, ինչպես դարբինն է երկաթներ ծեծում և պղնձագործն է պղինձը կոփում: Այդպես իրար հետ կռվեցին ամբողջ օրը: Հրացանների ճայնից և աղեղների ճայթյունից, արյան խոխոջից, ձիերի փռնչյունից պարսից բոլոր բեռնակիր անասունները՝ ուղտերը, ձիերը, ջորիները, էշերը, ամենը գլուխներն առան փախան իրենց տեղերը: Ասում էին, թե նույն գիշեր ուղտերը հասան Շիրազ. և սա ճշմարիտ է, քանի որ ճանապարհին պատահած մարդկանց իրենց տակով արին և սպանին, իսկ իրենք արագությամբ հասան իրենց տեղերը:

Այդ նույն պատերազմում իրար հանդիպեցին Ամիրգունա խանը և Աղաթանկին: Ամիրգունա խանը ասում է. «Քարաբլուր, ո՞ւր ես փախչում» և անմիջապես թրերը շարժեցին միմյանց վրա մի

ակնթարթում: Նախ Աղաթանկին թուրը վրա բերեց խանի ձախ թևին և խոցեց: Նույնպես խանը ևս հարվածեց վրացու ձախ ուսին, որը և կտրվեց ու ընկավ գետնին, իսկ ինքը վրացին կախված մնաց ձիուց: Նրա զորականները վերցրին նրան, տարան իրենց մոտ և նա այնտեղ մեռավ: Իսկ Ամիրգունա խանը վիրավոր եղավ: Նա ուներ Թահմազբեկ անունով մի տղա, որ իր մոտ էր. սա եկավ վիրակապեց իր հորը և ուղարկեց Երևան, իսկ ինքը մնաց այնտեղ պարսից զորքի հետ: Այնտեղ այդ պատերազմում ընկան Շահբանդա խանը, Սելիմ Սուլթանը և այլք պարսից մեծամեծներից: Չնայած սրանք ընկան, բայց վրացիները կորան, ոչնչացան: Մովրովը փախավ օսմանցիների երկիրը (Թուրքիա), իսկ պարսիկները զորացան և տիրեցին Վրաստանը մինչև այսօր:

ԳԼՈՒԽ ԺԸ
ԴԱՎԻԹ ԽԱՉՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Որովհետև կամեցա պարսից գործերը պատմել, կասեմ նաև հետևյալը: Երբ շահը Գանձակը գրավեց, այնտեղ իշխան նշանակեց Դավիթ խանին:

Սա ներգավոր, հպարտ, ինքնահավան և գոռոզ մարդ էր, որևէ մեկին ամենևին չէր խոնարհվում: Իսկ երբ շահը Ղառչղա խանին թողեց Վրաստան, որ նրանց հնազանդեցնի, այնտեղ թողեց նաև Դավիթ խանին, ասաց՝ թե Ղառչղա խանի խոսքով գնա և հնազանդվիր նրան: Իսկ նա թեպետ մնաց այնտեղ, չգնաց Ղառչղա խանի մոտ, և ոչ էլ Ղառչղա խանը իր մոտ կանչեց Դավիթ խանին: Այսպես քենով էին լցված միմյանց նկատմամբ: Իսկ Դավիթ խանը միշտ գնում էր Մովրովի մոտ և նրանք դարձան միմյանց սիրելի սեղանակիցներ:

Դավիթ խանը միշտ հայհոյում և անարգ խոսքեր էր ասում Ղառչղա խանի մասին և ասում էր, թե եթե ես իշխանություն ունենամ նրա վրա, ոչ թե թրով կսպանեմ նրան, այլ մաս-մաս կհոշոտեմ: Այսպես ամեն օր խոսում էր Մովրովի առջև:

Եվ եղավ, որ սուրհանդակի բերած նամակը Մովրովն առավ, կանչեց Դավիթ խանին և ցույց տվեց նամակը: Իսկ նա խրատեց նրան,